ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ
6-րդ դասարան

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1.

1. Գ. 2.Գ

3. Խորամանկ, շողոքորթ, քծնող, ստախոս, վախկոտ

4. «Ուժի հետ մեկտեղ խելք է հարկավոր»

5. Երկյուղ—վախ, սարսափ, ահ, տագնապ—հոմանիշ

Համարձակ, անահ, քաջ, խիզախ, անվեհեր, արի, քաջասիրտ-հականիշ

6. Փոքրանալ. կծկվել, վախենալ

Սփրթնել, գունատվել

Քանդվել, ավերվել, փչանալ, կորչել

7. Բարեկամ, եղբայր

8. Եզոպոս «Գայլերն ու ոչխարները»,«Աղվեսն ու հովազը», Հիսուս Քրիստոս «Անառակ որդու վերադարձը», «Մարդը, որ ներել չէր ուզում», Վարդան Այգեկցի «Առյուծ և մարդ», «Ոսկին և ցորենը», Մխիթար Գոշ «Ուղտը և իր խնամողը», Աթաբեկ Խնկոյան «Խխունձն ու սունկը», «Ագռավն ու աղվեսը», Ավետիք Իսահակյան «Արջն ու օձը», Հովհաննես Շիրազ «Մարգարիտն ու փրփուրը», Իվան Կռիլով «Կարապը, խեցգետինը և գայլաձուկը» և այլն:

9. Իրական կյանքը առակում ներկայացվում է այլաբանորեն է մարդկանց և անձնավորված կենդանիների, բույսերի և այլ առարկաների միջոցով:

10. Առակը բանահյուսական, ապա և գեղարվեստական հորինվածքով, բարոյախրատական բովանդակությամբ ստեղծագործություն է՝ բաղկացած երկու մասից՝պատմությունից և բարոյախոսությունից՝ Այս առակը ցույց է տալիս, Առակս ցուցանե …

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ
6-րդ դասարան

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2

1. Ամանորը ժամանակի երազանքաբաշխ սահմանայունն է:

2.Ա, Բ

3. Նոր տարի-Ամանոր, Տարեմուտ, Կաղանդ

4. Աստվածառաք խնդության արժանի են երազանք ունեցող բարի, աշխատասեր, արդարամիտ մարդիկ:

5. «Հայոց մեջ ընդունված չէ հյուրին ձեռնունայն ճամփու դնել»:

Հայոց աշխարհի, հայ ժողովրդի բնութագրական գծերից են հյուրասիրությունն ու առատաձեռնությունը:

6. Պտղունց-չնչին, աննշան, շատ քիչ

Շշկլվել-մոլորվել, շփոթվել, սխալվել

Ճամփու դնել- ճանապարհել, ուղարկել

7.Իրենց երազանքից

8. Հրեշտակը Աստծո մոտ է վերադառնում երազանքի երկու տոպրակ ուսած:

9. Գ

10. յուրաքանչյուր Տարեմուտի մարդիկ երազանք են պահում և հավատում, որ այն ան պայման կկատարվի մեկ տարվա ընթացքում: Հավատում են, որ Ամանորը մարդկանց երազանքները բաշխելու է հենց այդ սահմանված ժամկետում, որովհետև հաջորդ տարի երազանքները նորոգվում են կամ փոխվում, ուստի երազանքի իրականացման սահմանը հենց այդ մեկ տարին է: